թիւնն որ ի Ձեզ, այսուհետեւ եւս առաւել վառեսցի և բորբոքեսցի ի միտս և ի սիրտս Ձեր՝ քարոզութեամբ և ջանիւք Գերապատիւ Առաջնորդին Ձերոյ և սիրելւոյ մերոյ Մեսրովբ եպիսկոպոսի, զոր ընկալեալ որդիական սիրով, փոյթ կալջիք կատարել զոր ինչ քարոզեսցէ Ձեզ ի բարին և վարդապետեսցէ յանուն Տեառըն մերոյ Յիսուսի Քրիստոսի, զօգուտն հոգւոց ձերոց հոգալով յաւէտ իբրեւ զհովիւ քաջ՝ որ զանձն իւր դնէ ի վերայ ոչխարաց։

Արդ՝ մնամք և կամիմք վստահ լինել՝ զի արդիւնաւոր քարոզութեամբ և խոհական կարգադրութեամբ խոհեմափայլ Սրբազան Առաջնորդին Ձերոյ՝ ոչ անագանեսցի լսել մեզ զբաւուք գընացիչ Ձերոց, զբերկրառիթ բանս, զեղբայրսիրութեան ասեմ, ըզմիաբանութեան, դազգասիրութեան և զուսումնասիրութեան, որով մխիթարեալ մեր ըստ հոգւոյ օրհնեսցուք զանուն Ամենաբարձրելոյն Աստուծոյ և գովեսցուք զարժանաւորութիւնս Ձեր և զբարեպաշտական գնացս ի Քրիստոս։

Ինքնին Տէր Ամենակալ Աստուած մահկանացուաց և անմահից հեղցէ, զեղցէ և ծաւալեսցէ յերկնից ի վերայ սիրելեացդ մերոց զպարգեւս անսպառ ողորմութեան իւրոյ և զշնորհս մարգասիրական գթութեանց։ Օրհնեսցէ զՁեզ և զամենայն զբարենըպատակ գործս և զձեռնարկս, զերկիր Ձեր և զընակութիւնս, զորդիս և զամենայն ընտանիս Ձեր. բարձցէ յերկրէ Ձերմէ զամենայն արկածս չարին և զփորձանս, որք յաճախին ի մեզ վասն մեղաց մերոց։

Շնորհք Տեառն մերոյ Յիսուսի Քրիստոսի եղիցի ընդ ձեզ ընդ ամենեսեան՝ որ հաւատարիմ էք Մօրս Լուսոյ Սրբոյ Կաթուղիկէ Էջմիածնի և խաղաղութիւն Աստուծոյ բազմասցի ի վերայ համայնիցդ ամէն։

ՄԱԿԱՐ ԿԱԹՈՂԻԿՈՍ ԱՄԵՆԱՅՆ ՀԱՅՈՑ

Համար 341.

Գրեցաւ կոնդակս օրհնութեան ի 20 յունիսի, 1887 ամի Փրկչական, և ի թուականութեան մերում ՌՃԼԶ.

Ի Սուրբ Էջմիածին։